նանդյանը բավարարվում է նրկ. Ադոնցի այն բացատրությամբ, որ «ասպետը» Բագրատունիների տոհմային տիտղոսն է, նշանակում է «տոհմապետ» և համապատասխանում է իրանական visapati բառին։ «Թեև,—ավելացնում է Հ. Մանանդյանը,—Ն. Ադոնցի այս ստուգաբանությունը կարոտ է ավելի հիմնավոր լուսաբանման, սակայն այս մեկնությունն ըստ իս հավանական է, որովհետև նոր այս բացատրությամբ միանգամայն հասկանալի է դառնում ասպետի» գործածությունն իբրև տիտղոս Բագրատունիների միայն տոհմում»[25]։ Նույն տեղում ակադ. Հ. Մանանդյանը դրվատելով Հյուբշմանի և Աճառյանի ստուգաբանությունը, գրում է. «Անհասկանալի է նույնպես, թե ինչու ասպետը ունենալով ֆեոդալական chevalier կամ рыцарь բառի նշանակությունը, գործածական չի եղել Հայաստանում իբրև տերմին «ձիավոր ազնվական»-ների համար»[26]։

Որ ձիավոր և ձիավարժ տերմինները նույն ասպետի հոմանիշներն են, այդ մասին վկայում են նաև մատենագրական այլ աղբյուրներ։ Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը», որը լույս է տեսել 1956 թվականին, խաչակիր ասպետներին հավասար կերպով և ասպետի իմաստով օգտագործում է ձիավորներ[27] տերմինը։ «Ձիավարժը» ասպետի իմաստով օգտագործել է նաև Մատթեոս Ուռհայեցին[28]։

14-րդ դարի հեղինակ Յովհան Դարդելը, որը գրել է Կիլիկյան հայկական պետության վերջին շրջանի պատմությունը, ձիավոր և ասպետ տերմինները օգտագործել է որպես համազոր և հոմանիշ բառեր[29]։ Այսպես, իր «Ժամանակագրության» 43-րդ գլխի վերնագրում գրում է. «Յաղագս Կոստանդնի որ հրամայեաց երկու ձիաւորաց, որպեսզի խեղդեն վերոհիշյալ տիկինն և երկու որդիները և ինչպես անոնք հրաշքով ազատելու մասին»[30]։

Ինչպես տեսնում ենք, վերնագրում գրված է «երկու ձիաւորաց», իսկ կոնտեքստում «երկու ձիավոր» բառերի տեղ օգտագործում է ասպետ բառը, գրելով. «եւ հրաման ասպետաց երկուց (իսկ ֆրանսերեն օրինակում (deux chevalier) ազատեց ջրահեղձոյց առնեն զտիկինն զայն և զորդիս նորա երկոսին գաղտնաբար»[31]։ Այնուհետև «Ժամանակագրության» բազմաթիվ գլուխներում, «chevalier» տերմինը օգտագործում է հայ ձիավորների մասին խոսելիս, իսկ հայերեն թարգմանությունում «chevalier»-ն իրավացիորեն թարգմանված է ասպետ բառով[32]։ Սմբատ սպարապետի Տարեգրքում օգտագործված «ձիաւորեցուցանել»[33] տերմինի փոխարեն և նույն նշանակությամբ օգտագործում է «արարեալ զնա ասպետ»[34] արտահայտությունը։ Թեկուզ միայն «ձիաւորացուցանել» տերմինի «ասպետ արարեալ» նշանակության օգ-

---

25 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 63։

26 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 63։

27 «Սմբատ սպարապետի Տարեգիրք», 1956, էջ 148։

28 «Մատթեոսի Ուռհայեցւոյ Ժամանակագրութիւն», էջ 259, 337, 339։

29 «Յովհաննու Դարդելի Ժամանակագրութիւն Հայոց», 1891, Ս. Պետերբուրգ, էջեր 50—51, 54, 69, 107։

30 Նույն տեղում, էջ 54։

31 «Յովհաննու Դարդելի Ժամանակագրութիւն Հայոց», 1891, Ս. Պետերբուրգ, էջ 54։

32 Նույն տեղում, էջ 50—51, 54, 69, 107, 115։

33 «Սմբատ Սպարապետի Տարեգիրք», էջ 231, 244։

34 «Յովհաննու Դարդելի Ժամանակագրութիւն», էջ 115։